

ԽՈՐՀՐԴԻ 1990 թվականի մայիսի 29-ի ՀՐԱՀԱՆԳ

Արտապատկերման (դիսփիլեյ) միջոցներով աշխատանքի՝ առողջության և անվտանգության նվազագույն պահանջների մասին

**(87/391/ԵՏՀ հրահանգի 16 (1) հոդվածում նշված հինգերորդ առանձին հրահանգ)
(90/270/ԵՏՀ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 118ա հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1), որը ներկայացվել է Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ Պայմանագրի 118ա հոդվածով նախատեսվում է, որ Խորհուրդը հրահանգների միջոցով պետք է ապահովի նվազագույն պահանջներ, որոնք, մասնավորապես, նախատեսված են աշխատանքային միջավայրում բարելավումների խթանմանը՝ աշխատողների առողջության և անվտանգության պահպանության մակարդակը բարձրացնելու նպատակով,

քանի որ, համաձայն այդ հոդվածի, նման հրահանգներում պետք է ձեռնպահ մնալ այնպիսի վարչական, ֆինանսական և իրավական սահմանափակումներ սահմանելուց, որոնք կխոչընդոտեն փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումն ու զարգացումը,

քանի որ Հանձնաժողովի կողմից աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության հարցերով իր ծրագրերի վերաբերյալ հաղորդակցությունը (4) նախատեսում է այնպիսի միջոցների ընդունում, որոնք առնչվում են նոր տեխնոլոգիաներին, և քանի որ Խորհուրդը հաշվի է առել այդ հաղորդակցությունը 1987 թվականի դեկտեմբերի 21-ի՝ աշխատողների անվտանգությունն ու առողջությունն ապահովելուն ուղղված իր որոշման մեջ (5),

քանի որ այն աշխատակայաններում, որտեղ օգտագործվում են արտապատկերման միջոցներ, անվտանգության ավելի բարձր մակարդակ ապահովելուն ուղղված նվազագույն պահանջների հետ համապատասխանությունն էական նշանակություն ունի աշխատողների անվտանգությունը և առողջությունն ապահովելու հարցում,

քանի որ սույն Հրահանգն «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցառումների ներմուծման մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով (6) առանձին հրահանգ է, և քանի որ վերջինիս դրույթները միանգամայն կիրառելի են արտապատկերման սարքավորումներ օգտագործող աշխատողների համար՝ չսահմանափակելով սույն Հրահանգում ներառված առավել խիստ և (կամ) հատուկ դրույթների գործողությունը,

քանի որ գործատուները պարտավոր են տեղյակ լինել տեխնոլոգիայի վերջին զարգացումների և աշխատակայանի նախագծմանը վերաբերող գիտական հայտնագործությունների մասին, որը հնարավորություն կտա նրանց կատարելու համապատասխան փոփոխություններ, որոնք անհրաժեշտ են՝ երաշխավորելու համար աշխատողների անվտանգության և առողջության առավել լավ պաշտպանություն,

քանի որ էրգոնոմիկական կողմերը հատկապես կարևոր են արտապատկերման սարքավորումներով աշխատակայանների համար,

քանի որ սույն Հրահանգի ընդունումը շոշափելի քայլ է՝ ուղղված ներքին շուկայի սոցիալական ուղղվածության զարգացմանը,

քանի որ 74/325/ԵՏՀ որոշման համաձայն (7)՝ այս բնագավառում առաջարկներ մշակելու նպատակով Հանձնաժողովը պետք է խորհրդակցի Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի հետ,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԲԱԺԻՆ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Կարգավորման առարկան

1. Սույն Հրահանգը, որը 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով հինգերորդ առանձին հրահանգն է, սահմանում է 2-րդ հոդվածում սահմանված արտապատկերման սարքավորումներ օգտագործող աշխատանքի անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջները:
2. 89/391/ԵՏՀ հրահանգի դրույթներն ամբողջությամբ կիրառելի են 1-ին պարբերության մեջ նշված ամբողջ ոլորտի նկատմամբ՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին:
3. Սույն Հրահանգը չի կիրառվում՝
 - ա) տրանսպորտային փոխադրամիջոցների և մեքենաների վարորդի խցիկի կամ վերահսկման խցիկի նկատմամբ.
 - բ) տրանսպորտային միջոցներում տեղադրված համակարգչային համակարգերի նկատմամբ.
 - գ) մեծ մասամբ հանրային օգտագործման համար նախատեսված համակարգչային համակարգերի նկատմամբ.
 - դ) աշխատակայանում երկարատև օգտագործման համար չնախատեսված «շարժական» համակարգերի նկատմամբ.
 - ե) հաշվիչ մեքենաների, հսկիչ դրամարկղային մեքենաների և այլ սարքավորումների նկատմամբ, որոնք սարքավորման անմիջական օգտագործման նպատակով տվյալների կամ չափի փոքր ցուցադրիչ ունեն.
 - զ) ավանդական նախագծման տպիչ մեքենաներ, որոնք հայտնի են «պատուհանով տպիչ մեքենա» անվանմամբ:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակով՝ տվյալ հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստներով.

ա) Արտապատկերման սարքավորում (դիսփլեյ)՝ տառաթվային կամ գրաֆիկական արտապատկերման էկրան՝ անկախ օգտագործվող ցուցադրման գործընթացից.

բ) Աշխատակայան՝ արտապատկերման սարք ունեցող սարքավորում, որի հետ մեկտեղ ստեղծաշար կամ ներածման սարք և (կամ) ծրագիր է օգտագործվում, որով պայմանավորված է օպերատորի/սարքի միջերեսը: Դրա հետ մեկտեղ օգտագործվում են նաև ընտրովի պիտույքներ, արտաքին սարքեր՝ ներառյալ սկավառակի սարքատարը, հեռախոսը, միացուցիչը մոդեմ, տպիչը, փաստաթղթապանակը: Արտապատկերման սարքի մաս են կազմում աշխատանքային աթոռը և աշխատանքային գրասեղանը կամ աշխատանքային տարածքն ու անմիջական աշխատանքային միջավայրը.

գ) Աշխատող՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 3 (ա) հոդվածում սահմանված աշխատող, ով սովորաբար, որպես իր առօրյա աշխատանքի էական մաս, արտապատկերման սարքավորում է օգտագործում:

ԲԱԺԻՆ II

ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 3

Աշխատակայանների վերլուծություն

1. Գործատուները պարտավոր են իրականացնել աշխատակայանների վերլուծություն՝ գնահատելու համար իրենց աշխատողների անվտանգության և առողջության պայմանները, մասնավորապես, այն հնարավոր ռիսկերի առումով, որոնք առաջ են գալիս տեսողության, ֆիզիկական խնդիրների և մտավոր լարվածության (սթրեսի) հետ կապված խնդիրների առումով:

2. Գործատուներն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում հայտնաբերված ռիսկերը շտկելու համար՝ 1-ին պարբերության մեջ նշված գնահատման հիման վրա: Նրանք հաշվի են առնում նաև հայտնաբերված ռիսկերի լրացուցիչ և (կամ) համատեղ ազդեցությունները:

Հոդված 4

Առաջին անգամ շահագործվող աշխատակայաններ

Գործատուները պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ 1992 թվականի դեկտեմբերի 31-ից հետո առաջին անգամ շահագործվող աշխատակայանները բավարարեն հավելվածում սահմանված նվազագույն պահանջները:

Հոդված 5

Արդեն շահագործվող աշխատակայաններ

Գործատուները պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ 1992 թվականի դեկտեմբերի 31-ին կամ այդ ամսաթվից հետո արդեն շահագործվող աշխատակայանները բավարարեն հավելվածում սահմանված նվազագույն պահանջները՝ ոչ ուշ քան այդ ամսաթվից չորս տարի հետո:

Հոդված 6

Աշխատողների տեղեկացվածությունը և վերապատրաստումը

1. Չխախտելով 89/391/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածը՝ աշխատողները տեղեկություն են ստանում իրենց աշխատակայանի հետ կապված անվտանգության և առողջության բոլոր կողմերի մասին, մասնավորապես, այն միջոցների մասով, որոնք կիրառելի են 3-րդ, 7-րդ և 9-րդ հոդվածների համաձայն շահագործվող աշխատակայանների նկատմամբ:

Բոլոր դեպքերում աշխատողները կամ նրանց ներկայացուցիչները տեղեկացվում են առողջության և անվտանգության այն միջոցների մասին, որոնք ձեռնարկվել են սույն Հրահանգի համաձայն:

2. Չխախտելով 89/391/ԵՏՀ հրահանգի 12-րդ հոդվածը՝ աշխատողները, նախքան այդ տեսակի աշխատանք կատարելը, պետք է վերապատրաստում անցնեն տվյալ

աշխատակայանի կիրառության մասին: Նրանք վերապատրաստվում են նաև այն դեպքերում, երբ աշխատակայանի կազմակերպումը էականորեն փոփոխվում է:

Հոդված 7

Առօրյա աշխատանքի իրականացումը

Գործատուն պետք է աշխատողի գործունեությունը պլանավորի այնպես, որ արտապատկերման էկրանի հետ առօրյա աշխատանքը պարբերաբար ընդհատվի ընդամիջումներով կամ փոխարինվի գործունեության այլ ձևերով՝ արտապատկերման էկրանի վրա աշխատանքային ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով:

Հոդված 8

Աշխատողների հետ խորհրդակցությունը և նրանց մասնակցությունը

Աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ խորհրդակցությունը կամ նրանց կողմից մասնակցությունը սույն Հրահանգով կարգավորվող խնդիրներին տեղի է ունենում 89/391/ԵՏՀ հրահանգի 11-րդ հոդվածի համաձայն՝ ներառյալ դրա հավելվածը:

Հոդված 9

Աշխատողների աչքերի և տեսողության պաշտպանությունը

1. Աշխատողները ունեն աչքի և տեսողության համապատասխան ստուգման իրավունք, որը պետք է իրականացվի անհրաժեշտ ունակություններ ունեցող անձի կողմից՝
 - նախքան արտապատկերման էկրանի աշխատեցնելը.
 - աշխատանքն սկսելուց հետո կանոնավոր ընդամիջումներով և
 - եթե նրանք տեսողական խնդիրներ են ունենում, որը կարող է կապված լինել արտապատկերման էկրանի աշխատանքի հետ:
2. Աշխատողներն ունեն ակնաբուժական հետազոտության իրավունք, եթե 1-ին պարբերության մեջ նշված ստուգման արդյունքներով ցույց է տրվել նման անհրաժեշտություն:

3. Եթե 1-ին պարբերության մեջ նշված ստուգման կամ 2-րդ պարբերության մեջ նշած հետազոտության արդյունքները ցույց են տալիս նման անհրաժեշտություն, և եթե սովորական ուղղիչ սարքեր հնարավոր չէ օգտագործել, ապա աշխատողներին պետք է տրամադրվեն հատուկ ուղղիչ սարքեր, որոնք համապատասխանում են տվյալ աշխատանքին:

4. Սույն հոդվածի համաձայն ընդունված միջոցները ոչ մի պայմանով չպետք է լրացուցիչ ֆինանսական միջոցների հաշվին աշխատողներ ներառեն :

5. Աշխատողների աչքերի և տեսողության պաշտպանությունը կարող է ապահովվել որպես ազգային առողջապահական համակարգի մաս:

ԲԱԺԻՆ III

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 10

Հավելվածներում կատարվող փոփոխությունները

Հավելվածում կատարվող խիստ տեխնիկական փոփոխությունները, որոնցում պետք է հաշվի առնվեն տեխնիկական առաջընթացը, միջազգային կանոնակարգերում և մասնագրերում զարգացումներն ու արտապատկերման բնագավառում գիտելիքները, ընդունվում են 89/391/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

Հոդված 11

Եզրափակիչ դրույթներ

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի համապատասխանեցման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական դրույթները 1992թվականի. դեկտեմբերի 31-ից ոչ ուշ :

Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի դրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են կամ արդեն ընդունել են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

3. Անդամ պետությունները յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ սույն Հրահանգի գործնական կիրառման վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում Հանձնաժողով՝ նշելով աշխատողների և գործատուների տեսակետները:

Հանձնաժողովը տեղեկացնում է Եվրոպական պառլամենտին, Խորհրդին, Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին ու Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով Խորհրդատվական կոմիտեին:

4. Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտին, Խորհրդին ու Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին սույն Հրահանգի կիրառման վերաբերյալ զեկույց է ներկայացնում կանոնավոր ընդմիջումներով՝ հաշվի առնելով 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները:

Հոդված 12

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1990 թվականի մայիսի 29-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Բ. ԱՀԵՐՆ

1) ՊՏ թիվ C 113, 29.04.1988թ., էջ 7 և ՊՏ թիվ C 130, 26.05.1989թ., էջ 5:

2) ՊՏ թիվ C 12, 16.01.1989թ., էջ 92 և ՊՏ թիվ C 113, 07.05.1990թ.:

3) ՊՏ թիվ C 318, 12. 12. 1988թ., էջ 32:

4) ՊՏ թիվ C 28, 03.02. 1988թ., էջ 3:

5) ՊՏ թիվ C 28, 03.02.1988թ., էջ 1 (6). ՊՏ թիվ L 183, 29.06.1989, էջ 1:

7) ՊՏ թիվ L 185, 09.07.1974թ., էջ 15:

Հավելված

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ (4-րդ և 5-րդ հոդված) Նախնական դիտողություն

Սույն հավելվածում սահմանված պարտավորությունները կիրառվում են սույն Հրահանգի նպատակներին հասնելու համար: Դրանք գործում են այնքանով, որ նախ՝ աշխատակայաններում առկա լինեն համապատասխան բաղադրիչները և երկրորդ՝ տվյալ առաջադրանքին հատուկ պահանջները կամ բնորոշիչները չխանգարեն նման պարտավորությունների իրականացմանը:

1. ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ա) Ընդհանուր դիտողություն

Նման սարքավորումների կիրառությունը չպետք է ռիսկի աղբյուր լինի աշխատողների համար:

բ) Արտապատկերման էկրան

Էկրանի վրայի նիշերը պետք է հստակ երևան և պարզ ձևակերպված լինեն: Դրանք պետք է լինեն համապատասխան մեծության և նիշերի ու տողերի միջև պետք է բավականաչափ տարածություն լինի:

Էկրանի վրայի պատկերը պետք է անշարժ լինի: Այն չպետք է տատանվի կամ որևէ այլ անկայուն ձևաչափ ունենա:

Սարքը աշխատեցնողը պետք է կարողանա հեշտորեն կարգավորել նիշերի և ընդհանուր ֆոնի միջև լուսավորությունը և (կամ) հակադրությունը: Այն պետք է նաև հեշտորեն կարգավորվելու հնարավորություն ունենա՝ մթնոլորտային պայմաններին համապատասխան:

Էկրանը պետք է հնարավոր լինի հեշտորեն թեքել և ծռել՝ այն հարմարեցնելով սարքն աշխատեցնողի պահանջներին:

Պետք է հնարավոր լինի էկրանի համար օգտագործել առանձին տակդիր կամ շարժական սեղան:

Էկրանը չպետք է արձակի կուրացնող լուսարձակում կամ այլ արտացոլումներ, որոնք կարող են անհարմարություն ստեղծել օգտագործողի համար:

գ) Ստեղնաշար

Ստեղնաշարը պետք է լինի թեքվող և էկրանից առանձին լինի այնպես, որ աշխատողը կարողանա հարմարավետ աշխատանքային դիրք գտնել՝ խուսափելով թևերի և ձեռքերի հոգնածությունից:

Ստեղնաշարի դիմացի տարածությունը պետք է բավականաչափ լայն լինի, որպեսզի սարքն աշխատեցնողը կարողանա հենել ձեռքեր ու թևերը:

Ստեղնաշարը պետք է ունենա անփայլ մակերևույթ՝ խուսափելու համար արտացոլանքից:

Ստեղնաշարի դասավորվածությունը և ստեղների բնորոշիչները պետք է լինեն այնպիսին, որ ստեղնաշարի օգտագործումը հեշտանա:

Ստեղների վրայի նիշերը պետք է բավարար չափով տեսանելի և ըմբռնելի լինեն նախագծված աշխատանքային դիրքի ֆոնի վրա:

դ) Աշխատանքային գրասեղան կամ աշխատանքային մակերևույթ

Աշխատանքային գրասեղանը կամ աշխատանքային մակերևույթը պետք է բավականաչափ մեծ լինի, ունենա ցածր արտացոլման մակերես և էկրանից, ստեղնաշարից, փաստաթղթերից ու հարակից սարքավորումներից օգտվելու ճկուն շարժման հնարավորություն:

Փաստաթղթեր պահելու դարակը պետք է լինի կայուն ու կարգավորվող և պետք է այնպիսի դիրքով դրված լինի, որ գլխի ու աչքի անհարմար շարժումները նվազագույնի հասցվեն:

Աշխատողների համար բավականաչափ տարածք պետք է նախատեսված լինի՝ հարմար դիրք ընտրելու համար:

ե) Աշխատանքային աթոռը

Աշխատանքային աթոռը պետք է ամուր լինի ու օպերատորին (օգտագործողին) ազատ շարժվելու և հարմարավետ դիրք ընդունելու հնարավորություն տա :

Նստատեղի բարձրությունը պետք է կարգավորելի լինի :

Նստատեղի թե՛ բարձրությունը և թե՛ կորությունը պետք է կարգավորելի լինի:

Այն անձինք, որոնք նման պահանջ են ներկայացնում, պետք է ոտքերը հանգստացնելու հնարավորություն ունենան:

2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

ա) Տարածքին վերաբերող պահանջները

Աշխատակայանը պետք է չափագրվի ու նախագծվի այնպես, որ հնարավոր լինի օգտագործողին տրամադրել բավարար չափով տարածություն՝ դիրքերը փոփոխելու և տարաբնույթ շարժումներ կատարելու համար:

բ) Լուսավորությունը

Սենյակի լուսավորությունը և (կամ) աշխատատեղի լուսավորությունը (գրասենյակային լամպեր) պետք է ապահովեն բավարար չափով լուսավորության պայմաններ և համապատասխան հակադրություն էկրանի և ֆոնային միջավայրի միջև՝ հաշվի առնելով աշխատանքի տեսակը և օգտագործողի տեսողական պահանջները:

Էկրանի կամ որևէ այլ սարքավորման վրա հնարավոր խանգարող կուրացնող լույսը և արտացոլումները պետք է կանխվեն աշխատատեղի և աշխատակայանի նախագծման համակարգմամբ՝ արհեստական լույսի աղբյուրների դիրքի և տեխնիկական բնորոշիչների միջոցով:

գ) Արտացոլումները և կուրացնող լույսը

Աշխատակայանները պետք է նախագծվեն այնպես, որ լույսի աղբյուրները, օրինակ՝ պատուհանները և այլ բաց տարածքներ, թափանցիկ ու կիսաթափանցիկ պատերը և պայծառ ներկած անշարժ գույքը կամ պատերը չառաջացնեն ուղղակիորեն ազդող կուրացնող լույս ու հնարավորինս չարտացոլվեն էկրանի վրա:

Պատուհանների վրա պետք է ունենան կարգավորվող ծածկոցի համապատասխան համակարգ՝ խամրեցնելու համար դեպի աշխատակայան ընկնող բնական լույսը:

դ) Աղմուկը

Աշխատակայանին (աշխատակայաններին) պատկանող սարքավորումներից առաջացող աղմուկը պետք է հաշվի առնվի, երբ աշխատակայանները համալրվում են սարքավորումներով, մասնավորապես, դա չպետք է շեղի ուշադրությունը կամ խանգարի խոսակցություններին:

ե) Ջերմությունը

Աշխատակայանում (աշխատակայաններում) տեղադրված սարքավորումները չպետք է չափից շատ տաքություն արտազատեն, որը կարող է աշխատողների համար անհարմարություն առաջացնել:

զ) Ճառագայթումը

Ճառագայթման բոլոր տեսակները, բացառությամբ էլեկտրամագնիսական սպեկտրի տեսանելի մասից արտազատվող ճառագայթման, պետք է նվազեցվի մինչև աննշան մակարդակների՝ նպատակ ունենալով պաշտպանելու աշխատողների անվտանգությունը և առողջությունը:

է) Խոնավությունը

Պետք է ստեղծվի և պահպանվի խոնավության համապատասխան մակարդակ:

3. ՕՊԵՐԱՏՈՐ/ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ՄԻՋԵՐԵՍԸ

Ծրագիրը նախագծելիս, ընտրելիս, շահագործելիս և փոփոխելիս, ինչպես նաև արտապատկերման սարքի օգտագործում պահանջող առաջադրանքներ հանձնարարելիս՝ գործատուն պետք է հաշվի առնի հետևյալ սկզբունքները՝

ա) ծրագիրը պետք է համապատասխանի առաջադրանքին.

բ) ծրագիրն օգտագործելու համար հեշտ պետք է լինի և, հարկ եղած դեպքում, հնարավոր լինի այն փոփոխել ըստ օպերատորի գիտելիքի և փորձառության մակարդակի. չի կարելի առանց աշխատողի գիտության օգտագործել քանակական կամ որակական որևէ ստուգող սարք.

գ) համակարգերի միջոցով պետք է հետադարձ կապ տրամադրվի աշխատողներին նրանց գործունեության մասին.

դ) համակարգերի միջոցով պետք է այնպիսի ձևաչափով և արագությամբ տվյալներ ցուցադրվեն, որոնք հարմար են օպերատորների համար.

ե) պետք է կիրառվեն ծրագրային էրգոնոմիկայի սկզբունքներ, մասնավորապես, մարդկանց վերաբերող տվյալների մշակման ժամանակ: